# ԼԱՉԻՆԻ ՇՐՋԱՆ

## 71. ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

*Գտնվում է պատմական Սյունիքի Աղահեճք գավառում, ներկա Գորիսի և Ադրբեջանական ՍՍՀ Լաչինի շրջանի սահմանագլխին՝ Հագարու գետի վտակների միացումից գոյացող բարձրադիր հարթության վրա. ամենամոտիկ գյուղը Գորիսի շրջանի Խնածախն է։*

*Այս վանքի հիմնարկության ժամանակի մասին տեղեկություններ չկան։ Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմության» մեջ մի քանի անգամ հիշատակում է վանքի անունը, դրանցից ամենահինը վերաբերում է 844 թ., երբ Տաթև վանքի սահմանները հաստատող փաստաթղթի վկաների շարքում հիշում է «Ստեփաննոս Ծիծառնոյ վանականն», բայց շենքի ճարտարապետական առանձնահատկությունները ոչ մի կասկած չեն հարուցում, որ այն* IV—V *դարերի հնագույն բազիլիկ է։*

*Հնում վանքի մոտ եղել է նաև գյուղ՝ Ծիծառնավանք անունով և 10 չափ հարկով։ Վանքի և գյուղի անունն ըստ երևույթին առաջացել է շրջապատի քարաժայռերին ապրող ծիծեռնակներից։ Գոյություն ունի նաև ավանդություն, որ այդ վանքում է պահվել Պետրոս առաքյալի ծիծեռնը՝ ճկույթ մատի մասունքը։*

*Վանքի եկեղեցին յուրահատուկ նեղ ու երկար շենք է (21 մ երկար., մոտ 8 մ լայն., 18,5 մ բարձր.), որը 6 զույգ հաստահեղույս սյուներով բաժանվում է երեք նավերի, որոնցից միջինը համեմատաբար լայն է։ Ունեցել է երեք մուտք, որոնցից մեկն է այժմ բաց՝ հարավայինը։ Երկթեք կտուրի արևելյան և արևմտյան ծայրերի տակ կան փոքր սենյակներ։ Հետագայում կտուրին ավելացվել է նաև փոքրիկ գմբեթ-զանգակատունը։*

*Արդեն փլված շրջապարսպի ներսում կան մեծ թվով ավերակ շինություններ։*

*Ներկա ժողովածուում տեղ գտած 8 արձանագրություններից 7-ը հրատարակվում են առաջին անգամ։*

**685. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային պատի կենտրոնում, արտաքուստ, այժմ շարված-փակված մուտքի մոտ, 5 տող.*

ՈՎ Տ̅Ր Ք̅Ս Ա
ԶԱՏԵՂԲ
ԱՅՐ ՍԻՐՈՂ
ՁԳՐԻԳՈՐԶԱՆԱՐԺԱՆ
ԾԱՌԱՅԻՇԵՑԷՔՅԱՂԱԻԹՍ

ՈՎ. ՏՐ. ՔՍ. Ա|ԶԱՏ ԵՂԲԱՅՐ ՍԻՐՈՂ| ՁԳՐԻԳՈՐ, ԶԱՆԱՐԺԱՆ| ԾԱՌՍ. ՅԻՇԵ|ՑԷՔ ՅԱՂԱԻԹՍ:

Ծանոթ. *Ըստ տառերի ոճի, ոչ ուշ* X *դարից։*

---

[1] Ս. Օրբելեան, Պատմութիւն, 208, նաև 339, 500 էջեր։
[2] Անդ, 519։

686. ԵԿԵՂԵՑՈՒ արևելյան պատի (բեմի) կիսակամար մասում երկու պատուհանները բաժանող քարի վրա՝ երկու խաչ և 6 տող.

ԵՍ
ՄՀ
ՈՏ
ԻԿ
ԿԱՆԳՆԵՑԻԶԽԱՉՍՀԱՐԻՄ
ՄԽԻԹԱՐԱԽԱՐԲԷԿԻՆ

ԵՍ| ՄՀ|ՈՏ|ԻԿ| ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ
ԻՄ| ՄԽԻԹԱՐԱ ԽԱՐԲԷԿԻՆ:

687. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսարևելյան մույթի կամարի սկզբի երկու քարերի վրա՝ չորսական տող.

ՏԱՒ ԶԳՐԻ
ՈՐՑ ԳՈՐ
ԻՇԵ ԳԱ
ՑԷՔ ՅԻՂԵ

ՏԱՒ|ՈՐ Ց|ԻՇԵ|ՑԷՔ: ԶԳՐԻ|ԳՈՐ[Ի]/ԳՍ ՑԻՇԵ⸤ՑԷՔ⸥:

Ծանոթ. Վերջին անձնանվան տառերը հետ ու առաջ են դրված. հնարավոր է նաև Գիորգս վերծանել։

688. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային երկրորդ (արևմուտքից) մույթի վրա, խաչեր և 2 տող.

ԵՍՈՀՆՋԱՆՍԿ
ԿՆԵՑԻ ՍԲ ՆՇ

ԵՍ ՈՀ⸤Ա⸥ՆՋԱՆՍ Կ⸤ԱՆ⸥ԿՆԵՑԻ ՍԲ. ՆՇ⸤ԱՆՍ⸥:

689. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսարևմտյան մույթի վրա, խաչի շուրջը 3 տող.

ՍԲ ✝ ԽԱՉՍ
ԲԱԽԱՍ ՀՈԳՈՅ
ՄՀԴՍԻԳՆ Ն

ՍԲ. ԽԱՉՍ| ԲԱ⸤ՐԷ⸥ԽԱԻՍ ՀՈԳՈՑՆ| Մ⸤Ա⸥ՀԴ⸤Ա⸥ՍԻ ԳՆ...:

690. ՊԱՐՍՊԻ արևմտյան մուտքի կողին, 4 տող.

ԿԱՏԱՐԵՑԱՒ
ԵՍԱ ՊԱՐԻՍՊԻՁԵՌՆՀԱ
ԿԱԶԻՇԽԱՆԻՆԻԱՌԱՋՆՈՐԴՈՒ
ԹԻՄԿՐՏՉԵՊՍ Թ Ռ. Կ:Բ:++

ԿԱՏԱՐԵՑԱՒ| . . . . ԵՍԱ ՊԱՐԻՍՊՍ Ի ՁԵՌՆ
ՀԱՑ|ԿԱԶ ԻՇԽԱՆԻՆ, Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒ|ԹԻ.
ՄԿ⸤Ր⸥Տ⸤Ի⸥Չ ԵՊ⸤Ի⸥Ս⸤Կ⸥ՈՊՈՍԻ⸥, Թ⸤Վ⸥ԻՆ⸥ :ՌԿԲ:
(1613):

691. ԽԱՉՔԱՐ, դրված է բակի հարավում գտնվող տնտեսական շենքին որպես բարավոր, քիվին և ստորին մասում 2 տող.

ՍԲԽՆՍԳՈՒԶԼԻՆ
Թ ՌԾԴ

ՍԲ. Խ⸤Ա⸥ՉՍ ԳՈՒԶ⸤Ա⸥ԼԻՆ. Թ⸤Վ⸥ԻՆ⸥ :ՌԾԴ: (1605):

692. ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա եղել է՝

Նորոգեաւ գաւիթս և զանգակատունս ի ժամանակին Իբրահիմ խանին . . .
թ⸤ ին⸥, :ՌՄԻԲ: (1773):

Հրատ. Լալայան, Ազգ. հանդ., IV, 48։